ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2013թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» N580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի h.29 հասցեում գտնվող h.53՝ 35.6քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 10.09.2010թ. h.2658063 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լիլիթ Գամաղելյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լիլիթ Գամաղելյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Մարգարյան փողոցի h.29 հասցեում գտնվող h.53՝ 35.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Մարգարյան փողոցի h.29 հասցեում գտնվող h.53՝ 35.6քմ մակերեսով բնակարանը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 10.09.2010թ. h.2658063 վկայական):

Լիլիթ Գամաղելյանը շուրջ 29 տարի իր ընտանիքով, առանց իրավահաստատող փաստաթղթերի բնակվել է Մարգարյան փողոցի h.29 հասցեում գտնվող h.53 բնակարանում: Լ.Գամաղելյանը տվյալ բնակարանում հաշվառվել է 04.05.2002 թվականից՝ մեկ անձով և մինչ օրս բնակվում է նշված բնակարանում (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 20.03.2013թ. տրված h.354152 տեղեկանքը): Վերջինս իր միջոցներով իրականացրել է բնակարանի վերանորգման աշխատանքները և կատարել բոլոր անհրաժեշտ կոմունալ վճարումները:

Լիլիթ Գամաղելյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: (հիմք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի 21.03.2013թ. h.ԿԽ-2/2162 գրությունը)

Նկատի ունենալով, որ Լիլիթ Գամաղելյանն առանց իրավահաստատող փաստաթղթերի սկսած 2002 թվականից մինչ օրս բնակվում է Մարգարյան փողոցի h.29 հասցեում գտնվող h.53 բնակարանում, իսկ Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի h.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տները միայն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը կամ բնակելի տունը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթեր, նշված հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի Լիլիթ Գամաղելյանի բնակարանային հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ